





ՆԵՐՔԻՆԻ ԼՈՒՐԵՐ

Մեր աշխատակից Բաֆֆին չուտով կը վերջացնէ իր պատմական նոր վէպը «Իւսիթ Բէկ» անունով, որի բովանդակութիւնը առնված է Սիւնեաց աշխարհի 1722 թվ. հերոսի Կաւթի բէկի գործունէութիւնից: Այս աշխատութիւնը, որ իրաւ պայծառ լոյս է ձգում մեզանց մէջ ու կէս դար առաջվայ Հայաստանի թշուառ դրութեան և հայ իշխանների դեռ չը հանգած քաղաքական նշանակութեան վրա, կը սկսվի տպվել «Մշակի» մէջ գեղեցիկ մամուլով:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեզ գրում են, որ տեղային գեղեցիկ տղայ Առաքել Սիմոն Աղայեանցը, վեր առնելով քաղաքի հասարակութեանը պատկառնող գումարից 8000 բուրլի, ձեռնարկել է հիմնել Նոր-Բայազետում մի հեռավորատուն, մի դեղատուն և ուղղափառների համար մի եկեղեցի: Նոյն պարտնը դիտաւորութիւն ունի վեր առնել բանկից քաղաքի հասարակութեանը պատկանող փողերի մնացածը մի գինւորանոց կառուցանելու համար, որպէս զի կառավարութիւնը ստիպւած չը լինի վարձել գինւորների համար առանձին բնակարան: Այս ծառայութիւնների համար պ. դեղատնայնը յոյս ունի ստանալ պատուաւորանքներ, այսու ամենայնիւ, աւելի նպատակաւոր կը լինէր, որ այդ գումարները գործ դրվէին հասարակութեան ամենամեծ ծախս հիմնարկութիւնների վրա, որովհետեւ կառավարութիւնը կարօտութիւն չունի Նոր-Բայազետի աղքատ հայ հասարակութեանը, որ նրա համար եկեղեցի կամ գինւորանոց չի կառուցում, քանի որ իրանք մի օրինաւոր դպրոց չունեն և իրանց եկեղեցիները ամենաթշուառ դրութեան մէջ են:

Այս օրերուս թիֆլիսի մէջ մի ձիաւ արժողութիւնը որոշելու համար քաղաքային վարչութիւնից նշանակված անձանց ներկայութեամբ մի փոքր կատարվեցաւ: Սրա համար մարթիկ տուեցին երկու եղներ, որոնցից գոյացաւ 24 պուր միւս: Մասնաձեռնների խօսքով եղները գնված են եղել 87 բուրլով: Հաշուելով եղներից գոյացած մի քանակութիւնը՝ յայտնվեցաւ որ մասնաձեռնները կարող են այդ երկու եղներից ստանալ 91 բուրլ, որ իսկապէս մի անշուն աշխատանք է, աչքի առջև առնելով եղների մարթիկութեւ և մի տեղափոխելու ծախսը, գործակատարների ռոճիկը և այլն: Իրեն հետեանք այս փորձից կարելի է սպասել, որ քաղաքային վարչութիւնը կաւելացնի մի քանիստ անհատական (տակապի) կամքը: Բայց կարելի է արեւօք այդ փորձով առաջնորդվել, կարելի է միթէ հաւատալ, որ այդ երկու եղները գնված են եղել 87 բուրլով:

Թիֆլիսի մի հայ քահանայ երկար ժամանակ աշխատելու է լինում գրաւել մի այլի կնոջ և նրա փրկական գաւառը: Կնոջ կողքին, իմանալով տէր-հօր դիտաւորութիւնները, առաջարկում են իրանց քրոջը, որ ժամանակ նշանակէ քահանային իր տանը: Նշանակված ժամանակ, երբ տէր-հայրը մտնում է այլի կնոջ տնակը և կամենում է գրկել ու համարել նրան, կնոջ կողքին, յարձակվում են տէր-հօր վրա և դադանակով լաւ ծնծում են նրան:

Նոյեմբերի 23-ին հրատարակվեցաւ Թիֆլիսում «Փառք» ռուս ծաղրական շաբաթաթերթի առաջին համարը:

Այս տարի «Մշակի» բաժանորդագրութիւնը վաղ է սկսվել և առժամանակ շատ լաւ է դնում:

Նոյեմբերի 21-ին բացվեցաւ Թիֆլիսի Կուկիս ասված թաղի մէջ (Սիմէօսովսկայ փողոց, Ալի-վերդովի տանը) մասնաւոր բժշկարան: Ներկայ էին տեղական վարչութեան մեծաւորները և քաղաքի հասարակութիւնը: Բնակարանը օրհնեց ռուսաւարտան և հայ-լուսաւորական հոգևորականութիւնը, յետոյ բժշկարանի գլխավոր պ. Պավլովսկի մի կարճատև ծառի մէջ յիշեց բժշկարանի հիմնելու պատմութիւնը, ասելով, որ հիմնարկութեան ինքնակառուց տուող բժիշկ Նաւասարդեանցն է և բացառեց հանդիսականներին բժշկարանի կանոնադրութիւնը, որ հաստատված է Նորին Բարձրութեան փոխաբայի

Թողութեամբ, նոյնպէս և այդ հիմնարկութեան նպատակը: Բժշկարանի բնակարանը շատ գեղեցիկ և յարմար է, բազմաբնակ է ու ընդարձակ դահլիճներով, ունի արդէն կահ-կարասիներ, անկողիններ և բժշկական գանդաւան մեքենաներ ու գործիքներ: Բժշկարանի հիմնողներն են՝ Նաւասարդեանց, Պավլովսկի, Ուշակով, Բուդկովսկի և Շախ-Աղիյ: Այդպիսով, երբ ցանկանում այդ օգտաւետ հիմնարկութեանը և նորհաւորում ենք Կուկիսի թաղը, որ կունենայ այդ տեսակ գեղեցիկ բժշկարան:

Թիֆլիսի հայ-կաթոլիկ եկեղեցում նոյեմբերի 21-ին Արդուկին հայ-կաթոլիկների եպիսկոպոս արքայան Զաքարիան հանդիսաւոր պատարագ է մատուցել: Ամբողջ պատարագը և երգեցողութիւնը հարկէն լեցուով էին: Եկեղեցին լի էր բազմութեամբ, որի թուում և շատերը հայ-լուսաւորականներից: Սրբազանը մի յարմարաւոր քարոզ տուեց, որի մէջ յիշեց, թէ Թիֆլիսի և Անդրկովկասի քրիստոնեաները բաժանված էին միմեանցից, բայց այժմ նրանց յարաբերութիւնները և դէպի միմեանց ունեցած սէրը աւելի ստուր կը լինեն, քանի որ Թիֆլիսը Հայաստանի մի մասը միացած է Անդրկովկասին և կը վաշտէ այսուհետև ռուսաց տիրապետութեան բոլոր բարեբարութիւնները հաւասարապէս Անդրկովկասի միւս նահանգներին:

ՀԻՆ-ՆԱԽԻՑՆԵՆԻՑ մեզ գրում են, թէ Պարսկաստանի խոյ քաղաքի մի հայ կին փախելով, անցնում է ռուսաց սահմանը և գալիս է Նրախի ամի մօտ գտնվող Հին-Զուղայ կղզի: Այդ կինը իր հայրենիքում, յայտնի չէ ինչ հանգամանքներից ստիպված, ամուսնացած է եղել մի մահմադարական հետ և որի ձեռքից փախել է նա: Հին-Զուղայում նա ծանօթանում է սահմանադրի մաքառտան մէջ ծառայող մի ռուս ֆելդշերի հետ, որը ցանկութիւն է յայտնում պատկիւն նրա հետ: Եւ կարճ ժամանակ անց իր հայրենիք է վերադարձնում և իր հետ տանում է իր ծանօթանալով մաքառտան մէջ ծառայող մի ռուս ֆելդշերի հետ, որը ցանկութիւն է յայտնում պատկիւն նրա հետ: Եւ կարճ ժամանակ անց իր հայրենիք է վերադարձնում և իր հետ տանում է իր ծանօթանալով մաքառտան մէջ ծառայող մի ռուս ֆելդշերի հետ:

ՄԵՐՆԻՆ ՏԵՄՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ԱՊՍԱՄԱՐՈՒԹԻՒՆ

„ГОЛОСЪ“ լրագրի մէջ կարդում ենք հետևեալ առաջնորդող յօդուածը:

Եթէ ձեռնարկի է երեկոյ մեր ստացած լուրը ռուսաց հիւպատոսի Թաւրիզից գուրս գալու և Պարսկաստանի սահմանների վրա եղած ռուսաց զորքերի ուժեղացնելու մասին, ուրեմն հազիւ թէ կարելի է հաւատալ անգլիական լրագրիչների հաղորդած այն լուրերին, իբր թէ պարսկական զորքերի յաղթութիւնները քիւրդերի դէմ, Ուրմիայի և միւս կետերի մօտ վճռողականապէս ձեռն են քիւրդական ապստամբութիւնը: Աւելի հաւանական է, որ պարսից զորքերի յաղթութիւնները անհշտ են եղել, որովհետեւ քիւրդերի դէմ ուղարկած պարսկական զորքերի նոյն իսկ թիւն էլ փոքր է: Պարսկական երեք զօրաբաժինները կազմված էին ընդամենը 9000 զինուորներից, մինչդեռ զինուորված քիւրդ ամբոխի թիւը 15,000 մարդուց աւելի են հաշուում: Պարսկական զորքերի լաւ կամ վատ յատկութիւնների մասին դեռ ևս ոչինչ չէ կարելի ասել, չը նայելով, որ նրանք զինուորական արհեստը սովորում էին աւստրիական օֆիցերներից: Այդ օֆիցերներից շորսին Շահը ուղարկեց պատերազմ պարսկական զորքերի հետ, բայց նրանք բողոքեցին այդ կարգադրութեան դէմ, որովհետեւ պատերազմին մասնակցելը չէր որոշված նրանց պայմաններով: Այդ օֆիցերները պահանջեցին, որ իրանց ռոճիկը կրկնապատկի և 15,000 Ֆրանկ միաժամանակ տրվի, եթէ նրանք վիրաւորվեն պատերազմի ժամանակ: Այսպէս թէ այնպէս Թիֆլիսի մէջ ըստացված տեղեկութիւնները համեմատ

պարսկական զորքերի ու թիւը և ոչ էլ պատերազմական լաւ յատկութիւնները երաշխաւոր չեն, որ նրանք վերականգնեն հանգստութիւնը այն երկիրների մէջ, որոնց վրա մինչև այժմ բռնանում են քիւրդերը, որոնք Ուրմիայի մօտ յաղթվելուց յետոյ նոր մարդիկ հաւաքեցին և շարունակ քանդում և կողոպտում են լազիստանը, իրանց անցկացած տեղերը աւերակներ թողնելով: Ավերակ է, որ մենք անտարբերութեամբ չենք կարող նայել, թէ ինչպէս տարածվում է վայրենի քիւրդերի ապստամբութիւնը կովկասեան մեր սահմանների մօտ հետեւեալ երկու պատճառներով: Առաջինը՝ քիւրդերի ապստամբութիւնը և պարսից կառավարութեան զործարարած միջոցները այդ ապստամբութիւնը ձեռնելու համար ապացուցանում են Պարսկաստանի մինչ այն աստիճան թուլութիւնը, որ այդ կարող է ստիպել Ռուսաստանին գոնեա կողմնակի կերպով մասնակցել քիւրդ—պարսկական անկարգութիւններին, որ բոլորովին ցանկալի չէ Ռուսաստանի համար: Երկրորդ՝ մեզ համար չափազանց հետաքրքիր է իմանալ քիւրդական ապստամբութեան իսկական պատճառները և նպատակը, որովհետեւ այդ հարցը շօշափում է մեր յարաբերութիւնները Պարսկաստանի հետ: Այժմ կարդարանան այն ենթադրութիւնները, որ շիա պարսիկների դէմ ուղղված ապստամբութիւնը դադանի յարաբերութիւններ ունի և Պարսիկ հետ և որ Հենրի Մարտինի թանգալին հրացանները, որոնց գնելու համար քիւրդերը միջոցներ չունեն, նոյնպէս և Պարսից են ստացվում, այս դէպքում ապագայ դժուարութիւնների առաջն առնելու համար ռուսները պէտք է եռանդով մասնակցեն գործին և խեղդեն սկսված խտրիքը, քանի որ նա մեծ չափեր չէ ստացել: Մենք համոզված ենք, որ նոյն իսկ այս տեսակետից է նոյնը քիւրդական ապստամբութեան վրա կովկասեան փոխարքայութիւնը, որը անկասկած հիշուովեամբ կորոշի, թէ ինչպիսի դիրք պէտք է բռնեն ռուսները Պարսկաստանի, Թիւրքիայի և քրդական ապստամբութեան վերաբերութեամբ մեր սահմանները պաշտպանելու համար:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, 3 նոյեմբերի

«Մշակի» № 181-ի մէջ մի անհիմն լուր տեսաւ թէհրանց հաղորդված, որ ինքնին ապացուցանում էր, թէ ինչ ուղեղի և երեւակայութեան տէր մէկը հաղորդած է այդ լուրը: Դա ասում էր, թէ պարսից նախկին գինւորական և արտաքին գործոց նախարարը պաշտօնակն եղած է տեղութեան գանձաւորն այսքան դրամ պահաւած լինելու համար: Եւ ուշադրութիւն չէի դարձնի այդ դրամաւորութեանը, եթէ ինչպիսի անհիմն լուրը, որից հետեւանք, որ այդ լուրերը մի և նոյն աղբիւրից են—մոռնոյ մի խանդարեալ ուղեղի, և ինչ անարժան դիտմամբ, չը դիտեմ: Նոյն առնչակցութիւն կարող է ունենալ գինւորական նախարարը գանձաւորն հետ: Եթէ գանձաւորն ևս նորա ձեռքն էր, Գալով մեծ վեղիքի անկման պատճառին, ստույգը միայն այն է, որ Շահի հրովարտակը նորա պաշտօնակցութեան մասին, որ հրատարակված էր իրանա պաշտօնական լրագրում, այսպէս էր խօսում: Մենք քաղաքական պահանջմանց համեմատ, առժամանակաւ կերպով հրաժարեցողքին գինւորական և արտաքին գործոց նախարարին, և այլն... և յանձնեցինք նորան Վազիֆու կուսակալութիւնը: Դա մի ժամանակ Վազիֆի կեցաւ, ապա Գալիթի կառավարի կարգվեցաւ, և այժմ ուղարկվեցաւ կրկին նորան գինւորական նախարարութեան հրովարտակը, որ Արտաքականի գործերը կարգադրելուց յետոյ, վերադառնայ թէհրան նոյն նպատակներով: Պարսկական վերակալութիւնը, որը կը վարէր նախապէս, առանց սակայն այդպէս անուանվելու: Փակագծի մէջ ևս մի քանի խօսքեր: Մեքէհաւարան կարող է համարվել պարսից տեղութեան մէջ միակ հանձնարից պետական անձ: Նա բարձրացած է ցած դասակարգից, և առաջին

պաշտօնը եղած է հիւպատոսութիւն: Որպէս առաջարկ ցած դասակարգից առաջ եկած պետական անձերը, նա մեծ տաղանդ ունի: Եթէ Պարսկաստանի մէջ արագ յառաջդիմութիւններ չեն լինում, այդ նորա յանցանքն է, այժման եղանակով նորան պարտական ենք: Այդ պատճառների համար էր, որ նորա պաշտօնակցութիւնը բոլոր լուսաւորեալ դասի մէջ նկատվում էր իբրեւ մի քայլ Պարսկաստանի կողմից դէպի յետադիմութիւն:

Ասենք նաև ի միջի այլոց, թէ թէհրանի հայերը Շահից յանձնված էին Սթիլհայալին, այն համակրութեան համար, որ նա ունի դէպի Պարսկաստանի աշխարհաւան հասարակութիւնը, և որին նաև յանձնուած են հրէայք, գեղորբերը և այլն: Հայերը միշտ գտն են եղել և երախտապարս դէպի նրա գործը պաշտպանութիւնը, որ նա միշտ արած է մեզ, որոյ հորինելու թէհրանի դպրոցի համար յատկացված է 200 թուանոց օժանդակութիւն մշտապէս, և որոյ հորինելու այնքան լաւ ընդունելութիւն գտան Շահի մօտ ջուրղայեցի հայ կուսանք, և յաջողեցան տարեկան 100 թուանոց նպատակ ստանալ մենաստանի համար իւրաքանչիւր տարի:

Քուրդերի ապստամբութիւնը թուի թէ մասամբ զսպված է. այստեղ ամեն օր խօսում են նոցա բարբարոսութեանց վրա, որոնք նոցա գործած են և զեռ գործում են: Քուրդերը այժմ քաշված են Ուրմիայ կողմը, և Սովակ-Բուլակը ու Միսիստապը բաց թողել են, ուր պարսիկ զուեղեր կան: Տեսնենք, թէ ինչպէս պիտի վերջանայ այս ապստամբութեան դրաման: Բայց թէ ինչ քաղաքականութիւն պիտի բռնէ պարսից տեղութիւնը նկատմամբ օսմանցուց, այդ է կարևոր խնդիր: Պարսկաստանը պիտի գոհանայ արեւօք միայն քրդերին իր սահմանէն վանելով, որով ոչինչ արած կը լինի կրկին ապագայ ապստամբութեան հաւանականութեան դէմ:

Տաճատ Մասեհանց

ՄԵՐՆԻՆ ՀԵՌՄԵՆԻՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԵԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի: Այսօր առաւօտեան տաս ժամին թագաւոր Կայսրը աջողութեամբ վերադարձաւ Պետերբուրգ: Ժողովրդեան ահագին խումբերը ողջունում էին Կայսրին ողբով: «Ուրաւով» վերադարձան կոմ Լօրիս-Միլիքով և Պոսիկոս:

ԿԱՍԱՐՈ, 21 նոյեմբերի: Սէյմուր այսօր յայտնեց բոլոր նաւատորմների հրամանատարներին միացեալ նաւատորմի արձակելու մասին: Անգլիական նաւատորմը հեռաց Մալտա կղզեւորդի, իսկ Ֆրանսիականը Տուլոն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 37 կ., երկրորդ 92 ռ. 37 կ., երրորդ 93 ռ. 25 կ., չորրորդ 93 ռ. 5., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 220 ռ. 75 կ., երկրորդ 213 ռ., արեւելեան առաջին 90 ռ. 62 կ., երկրորդ 90 ռ. 50 կ., երրորդ 90 ռ. 50 կ., ոսկի 8 ռ. 15 կ.: Ռուսաց 1 բուրլ լօնդօնի վրա արժէ 24,69 պենս, ռուսաց 100 բուրլ Համբուրգի վրա 209 մարկ 75 պֆ., վարկի վրա 259 Ֆրանկ Ֆր. 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 նոյեմբերի: Տպագրական օրէնքները վերաքննող մասնագործի անդամ նշանակվեցաւ արաբալութեան միւնիստրի օգնական Ֆրիշ:

ԲԱՅԱՐՈՒ, 22 նոյեմբերի: Նաւատորմները հեռանում են ռուսաց նաւատորմը Պիրէյ, խալկականը՝ Բրիտանիայի, գերմանականը՝ Տրիեստ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 նոյեմբերի: „ГОЛОСЪ“ լրագրին հեռագրում են Վլադիվստոկից, որ ծովապետ Լեւսովսկի կոտորեց իր ռուքը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 նոյեմբերի: Նոյեմբերի 23-ին Բարձրագոյն հրամայված է 1881 թուի յունվարի 1-ից ոչնչացնել աղի ակցիզը և դրա համեմատ փոքրացնել արտասահմանից եկող աղի մաքսային տուրքերը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

